

ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արզենդրինայի հայոց թեմի առաջնորդ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

27 Հոկտեմբերի Չորեքշաբթի օր, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մեջ գաղտնի քուեարկութեամբ եւ 450 պատգամաւորներու մասնակցութեամբ ընտրուեցաւ Ամենայն Հայոց 132-րդ Վեհափառ Հայրապետը: 4 Նոյեմբերի Հինգշաբթի օր, կատարուեցաւ Ազգընտիր եւ նորընտիր Գարեգին Բ. Կաթողիկոսի օծումը՝ գլխաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա.ի, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպս. Սուրաֆեանի եւ մասնակցութեամբ տասներկու Արքեպիսկոպոսներու: Սուրբ Պատարագին եւ Օծման արարողութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան պետական Աւագանին՝ գլխաւորութեամբ Նախագահ Տիար Ռոպերթ Քոչարեանի եւ Վարչապետ Տիար Արամ Սարգիսեանի: Ներկայ էին նաեւ քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Գարեգին Ա. Կաթողիկոս այս աշխարհէն մեկնեցաւ անժամանակ կերպով, երբ Հայ եկեղեցին եւ ժողովուրդը որեւէ ժամանակէ աւելի պէտք ունէր իր ներկայութեան իբրեւ Հովուապետ եւ առաջնորդ: Հոգելոյս Հայրապետը իր ետին կը թողուր բաց մը եւ դժուար կացութիւն մը, քանի որ չկար թեկնածու մը որուն շուրջ կարելի ըլլար գոյացնել ընդհանուր միաձայնութիւն: Սակայն կարելի չէր նաեւ անգլուխ թողուլ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութիւնն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռը, մանաւանդ երբ ազգովին կը պատրաստուինք Հայաստանի մեջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնախմբութեանց եւ համայն Քրիստոնէութեան հետ՝ նաեւ Քրիստոսի ծննդեան 2000-ամեակի տօնախմբութեանց: Անհրաժեշտ էր ունենալ յաջորդը Վազգէններու եւ Գարեգիններու, շարունակելու համար Լուսաւորիչով սկսած 1700-ամեայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան առաքելութիւնն ու Առաքելական Մայր Աթոռի գործունէութիւնը:

Ընտրութիւնը կատարուեցաւ, հակառակ այն իրողութեան որ եղան յետաձգումը պահանջող առաջարկութիւններ, եղան բազմաթիւ «ըսի-ըսաւներ» եւ նոյնիսկ պահ մը թուեցաւ թէ լուրջ հարցեր գոյութիւն ունէին, որոնց արձագանք եղաւ Հայրենիքի եւ Սփիւռքի մամուլը...: Սակայն, փառք Աստուծոյ, կատարուեցաւ այն, ինչ որ պէտք էր կատարուէր՝ այսինքն՝ ընտրութիւնը: Ներկայացան երկու արժանաւոր թեկնածուներ եւ բնական էր որ ընտրուէր միայն մէկը. եւ այս պարագային եղաւ այն անձը, որ նախորդ՝ 1995-ի

ընտրութիւններուն հրաժարած էր Գարեգին Ա.ի միակ մրցակիցը ըլլալէ եւ այս անգամ կու գար յաջորդելու անոր իբրեւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Այսօր՝ ընտրութենէն եւ օծումէն ետք, երբ կը մտածենք թէ Մայր Աթոռը արդէն իսկ վերագտած է իր բնականոն վիճակը, կ'անդրադառնանք նաեւ որ Նորընտիր եւ Նորած Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի առջեւ կան բազմաթիւ դժուարութիւններ, լուծելիք հարցեր եւ կազմակերպելիք աշխատանքներ: Անշուշտ չենք ուզեր յոռետես ըլլալ (իր ընտրութեան առաջին իսկ վայրկեանին, 27 Հոկտեմբերի ժամը մօտաւորապէս 18.30-ին, Անկախ Հայաստանի կառավարութիւնը կ'ապրէր իր գոյութեան մեծագոյն ողբերգութիւնն ու դժուարագոյն պահը Խորհրդարանի սպանութեանց պատճառով), սակայն Գարեգին Բ. Վեհափառի առաջ կուտակուած են ազգային, եկեղեցական, ընկերային եւ Հայրենիքի այս կացութեան մէջ նաեւ տնտեսական դժուարութիւններ, որոնց համար պէտք է ունենալ պողպատեայ ջիղեր, մեծ համբերութիւն, անհատնում կորով եւ մանաւանդ կազմակերպուած ու զինուորական օրինապահութեամբ հոգեւորական եւ աշխարհական աշխատակազմ:

Աշխարհի ներկայ կացութեան մէջ երբ մարդ անհատը կը ջանայ մասնագիտանալ եւ մարդկութիւնը դէպի համախմբումի կ'երթայ, մենք՝ իբրեւ ժողովուրդ եւ եկեղեցի չենք կրնար անմասն մնալ ու չկազմակերպել մեր ազգային համախումբը մեր մասնագէտներու գործակցութեամբ: Անցած են այն ժամանակները երբ մէկ անձի վրայ կը կեդրոնանար ամէն ինչ. այս պարագային Կաթողիկոսէ մը կը սպասուէր ըլլալ աստուածաբան, գրագետ, պատմագետ, քաղաքագետ, կենցաղագետ, տնտեսագետ, կազմակերպիչ եւ Սուրբ Հոգիի բոլոր շնորհքներով օժտուած հոգեւորական: Այսօր իւրաքանչիւր անհատ ունի իր տեղն ու ինքնուրոյն արժէքը իր շրջապատին մէջ... սակայն հիմնականը ուժերու համախմբումն է եւ այս պարագային նաեւ հոգեւորականի գիտակցութիւնն ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ընդհանրական շահերը, որոնց համար ոչ ոք պէտք է զլանայ իր կարողութիւններն ու կարելիութիւնները:

«Ընտրուեցաւ արժանաւորը». վերջնական դատավճիռ մը չէ, այլ նոր սկիզբ մը, ուր «ընտրեալը» կ'արժեւորուի ոչ միայն իր անհատական ձիրքերով ու աշխատանքով, այլ նաեւ անմիջական գործակիցներու (առաջին առիթով հոգեւոր դասի ու մասնաւորաբար Եպիսկոպոսաց ժողովի) անսակարկ, անկեղծ ու համախումբ համագործակցութեամբ: Այս կը պահանջէ ոչ թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այլ պահանջքն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, որուն համար ծառայութեան ուխտ կատարած ենք եւ որուն շնորհիւ իւրաքանչիւրս իր դիրքին ու պաշտօնին վրայ դարձած է «Արժանաւոր ընտրեալ» ի փառս եւ ի շահ Մայր Եկեղեցւոյ ու Հայ Ազգի եւ ոչ թէ անհատական փառքի ու տիտղոսի:

Ուստի եզրակացնելով ըսենք. Փառք քեզ Աստուած, որ Մայր Հայրենիքի այս դժուար օրերուն կարողացանք կատարել բարեյաջող ընտրութիւնը Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին, որ արդէն ձեռնարկած է Հայրապետական իր ծառայութիւններուն, որուն կը մաղթենք ամէն բարիք եւ յաջողութիւն: Իսկ ամբողջ Հայ հոգեւորական դասին, ըլլան բարձրաստիճան կամ պարզ քահանայ, սարկաւազ ու դպիր, համախումբ ու հնազանդ ծառայութեան գիտակցութիւն մեր Մայր Աթոռի եւ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պայծառ ու լուսաշող ապագային ի խնդիր:

Տեղը անսասան պահէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ու իր հովանին տարածէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վրայ:

